



**«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՁՈՐԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից  
իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների  
պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն  
իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ  
հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից  
իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու  
կառավարման» ծրագրի շրջանակներում:*

## 1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

- Շահագործման թույլտվություն՝ ՇԱԹ-29/544, 2016թ.
- Ընդերքօգտագործման պայմանագիր՝ 22.07.16 թ. N Պ-544
- Շահագործման ժամկետը՝ մինչև 22.12.2045թ.
- Հանքի մակերեսը՝ 34,2 հա
- Հանքաքարի հաստատված պաշարը՝ հանքաքար՝ 23369,533 հազ. տ, ոսկի՝ 22095,25 կգ, արծաթ՝ 325,85 տ, պղինձ՝ 212709,5 տ, ցինկ՝ 132886,64 տ:
- Արդյունահանման տարեկան թույլատրելի ծավալը՝ 1000,0 հազ. տ:
- ՇՄԱԳ փորձաքննություն՝ ԲՓ 53, 22.06.2016թ.
- Ըստ ծրագրի և լիցենզիայի՝ «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ն արտադրությունը նախատեսվում է սկսել 2020թ-ից:

### Ազդակիր համայնքների մասին՝

Ազդակիր համայնքն է Քաջարան համայնքը՝ Գեղի և Նոր Աստղաբերդ բնակավայրեր

### Գեղի բնակավայր

Բնակչությունը կազմում է 144 մարդ, որից՝ կանայք 68, տղամարդիկ՝ 76, կենսաթոշակառու՝ 27, ընտանեկան նպաստների համակարգում գրանցված է 4 ընտանիք ընդհանուր 10 անդամով:

Ունի 640 աշակերտի համար նախատեսված դպրոց, որտեղ ներկա դրությամբ հաճախում են 31 աշակերտ, այդ թվում նաև Նոր Աստղաբերդ գյուղից:

Համայնքում գործում է ամբուլատորիա, որում աշխատում է մեկ բժշկուհի և մեկ բուժքույր: Ամբուլատորիան ենթարկվում է Կապանի բժշկական կենտրոնին:



Նկար 1. Գեղի բնակավայր

Տնտեսությունը՝ գյուղատնտեսական, գործունեության հիմնական ուղղություններն են անասնապահությունը և դաշտավարությունը:

Հողեր (ընդամենը)՝ 17199 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9265 հա, որից վարելահող՝ 39 հա, բազմամյա տնկարկ՝ 6 հա, խոտհարք՝ 138 հա, արոտ՝ 6873 հա, այլ հողատեսք՝ 2210 հա, բնակավայրերի հողեր՝ 67 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 27 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 15 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5138 հա, անտառային հողեր՝ 2488 հա, որից անտառածածկ՝ 989 հա, ջրային հողեր՝ 199 հա:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է լոբու, կարտոֆիլի, բանջարաբուստանային կուլտուրաների արտադրությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ:

Բնակավայրում գործազրկության մակարդակը շատ բարձր է: Բնակավայրի զարգացմանը խանգարող խնդիրները հիմնականում բնակչության արտահոսքն է, ծնելիության ցածր մակարդակը, բնակավայրում չկա գյուղատնտեսական արտադրանքի սպառման շուկա:

#### **Նոր Աստղաբերդ բնակավայր**

Գյուղի բնակչության թիվը կազմում է 49 մարդ, որից արական սեռի ներկայացուցիչներ՝ 27, իգականը՝ 22 մարդ, թոշակառու՝ 7 հոգի:

Զունի դպրոց և մանկապարտեզ:

Տնտեսությունը՝ գյուղատնտեսական, գործունեության հիմնական ուղղություններն են անասնապահությունը և դաշտավարությունը:



Նկար 2. Նոր Աստղաբերդ բնակավայր

Հողեր (ընդամենը)՝ 11201 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7934 հա, որից՝ վարելահող՝ 7 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 52 հա, արոտ՝ 4971 հա, այլ հողատեսք՝ 2901 հա, բնակավայրերի հողեր՝ 69 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 50 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների

օբյեկտների հողեր՝ 9 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2638 հա, անտառային հողեր՝ 463 հա, որից անտառածածկ՝ 285 հա, ջրային հողեր՝ 38 հա: Հողերի անջրդիության պատճառով նվազ են գյուղացու եկամուտները:

Բնակավայրերի խնդիրներն են՝ աղքատությունը, կախվածությունը արդյունաբերության որոշակի՝ հանքարդյունահանման ճյուղից, բնակչության արտագաղթը, օդի, ջրի, հողի աղտոտվածությունը, ժամանակակից ենթակառուցվածքների բացակայությունը, անբարեկարգ ճանապարհները և միջբնակավայրային տրանսպորտի բացակայությունը, տարածաշրջանում վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարների առկայությունը:

### **Քաջարան համայնք**

2017թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Քաջարան համայնքի մշտական բնակչությունը կազմել է 8145 մարդ, որից 7000-ը Քաջարան քաղաքի բնակչությունն է: Աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 57%-ը (մոտ 4650 մարդ), որից 23%-ը աշխատանք չունեն: Աշխատանք չունեցողների գերակշռող մասը կանայք են, քանի որ կանանց համար նախատեսված աշխատատեղերը քիչ են: Աշխատողների 75%-ը զբաղված են լեռնահանքային արդյունաբերությունում (ԶՊՄԿ ՓԲԸ աշխատակիցներն են), 10%-ը՝ մասնավոր այլ ձեռնարկություններում և գյուղատնտեսությամբ, 15%-ը՝ պետական և համայնքային կառույցներում:



Նկար 3. Քաջարան քաղաք

Համայնքի տնտեսության միաբևեռ բնույթը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի որակական և մասնագիտական ցուցանիշների վրա. ոչ լեռնահանքային մասնագիտություն ունեցողները, հատկապես երիտասարդները, հեռանում են համայնքից իրենց ընտրած մասնագիտությամբ այլ համայնքներում աշխատանք գտնելու ակնկալիքով: Համայնքում գործում է յոթ հանրակրթական դպրոց, որոնցից 5-ը՝ միջնակարգ, 2-ը՝ հիմնական: Աշակերտների թիվը՝ 1130: Քաղաքում

գործում է հիվանդանոց, պոլիկլինիկա, համայնքի 4 բնակավայրերում կան բուժապասարկման կենտրոններ<sup>1</sup>: Համայնքի զարգացման ռեիսկերն են՝

1. Համայնքի տնտեսության միաբեռնությունը
2. Լեռնահանքային ձեռնարկությունների գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա
3. Բնական աղետների և էկոլոգիական ռիսկերի բարձր մակարդակը
4. Համայնքաստեղծ ձեռնարկության փակվելը կամ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելը
5. Օրենքների հաճախակի փոփոխությունները
6. ՏԻՄ լիազորությունների անբավարարությունը խնդիրների լուծման համար

### **«Գեղի Գօլդ» ՍՊԸ-ի իրական սեփականատերերի մասին՝**

Համաձայն ՀՀ արդարադատության իրավական անձանց գրանցման էլեկտրոնային ռեգիստրի<sup>2</sup>՝ Ընկերությունը գրանցվել է 09.07.2012 թվականին: Ընկերության իրական սեփականատերը 27.08.2017 թվականից 100% բաժնեմասով ՀՀ քաղաքացի Սուրիկ Խաչատրյանն է: Նա միաժամանակ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է:

**«Գեղի Գօլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀՀ Սյունիքի մարզի Ոսկեծորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» ԲՓ 53 22.06.2016թ. փորձաքննական եզրակացության պահանջներն են՝**

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ՝ ներառյալ ՀՀ կառավարության որոշումը հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ:
2. Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել հանքաքարի վերամշակման ֆաբրիկայի, պոչամբարի համապատասխան ՇՄԱԳ հաշվետվությունները և նախագծային փաստաթղթերը, որոնցում անհրաժեշտ է ներառել նաև նախատեսվող բոլոր գործունեությունների նախագծային փաստաթղթերը (ջրամատակարարում, ջրհեռացում, էլեկտրամատակարարում, ճանապարհներ և այլն), ինչպես նաև N2 բացհանքի երկրորդ փուլի շահագործման համապատասխան փաստաթղթերը՝ երկրորդ գոտու լրահետախուզման ենթակա պաշարների համար:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում, ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ

<sup>1</sup> Տեղական տնտեսական զարգացման պլան Քաջարան համայնք, Քաջարան 2020:

<sup>2</sup> <https://www.e-register.am/am/companies/1267410>

հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերն ու պահանջները:

4. Շահագործման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային աղբ) հեռացումը տարածքից, ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների՝ ջուր, օդ, հող և այլն, մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

## **2 «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորություններն՝ ըստ 22.07.2016 թ. N Պ-544 ընդերքօգտագործման պայմանագրի**

### **2.1. Սոցիալական պարտավորություններ**

Յուրաքանչյուր տարի՝

1. 300,0 հազ. դրամ՝ համայնքի զարգացման տնտեսական ծրագրերին մասնակցություն,
2. 150,0 հազ. դրամ՝ դպրոցի համար անհրաժեշտ պիտույքների ձեռքբերում
3. 200,0 հազ. դրամ սոցիալապես անապահով ընտանիքներին նպաստի տրամադրում՝ ըստ համայնքի հայտի
4. Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար տեխնիկայի տրամադրում:

#### **2.1.1 22.07.2016թ. N Պ-544 հանքարդյունահանման պայմանագրով համայնքի նկատմամբ ստանձնած սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը**

Սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները և բարեգործական հատկացումները համայնքին չի կատարել մինչև 2018 թվականը, չնայած նրան, որ ՊՎ-544 (12.07.2016թ.) օգտակար հանածոների արդյունահանման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնել է շոշափելի պարտականություններ, ամեն տարի համայնքին ցուցաբերել 650,0 հազ. դրամի չափով մասնակցություն /Խախտել է ՀՀ կառավարության 22 մարտի 2012 թվականի N 437-Ն որոշման պահանջները/: 2018թ. սակայն Քաջարան համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրի մասնակցության նպատակով քաղաքի արտաբյուջետային հաշվեհամարին է փոխանցել 300000 դրամ, ինչպես նաև 200000 դրամ՝ սոցիալապես անապահով ընտանիքներին նպաստի տրամադրման նպատակով:



Միննույն ժամանակ, «Գեղիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, համաձայն Պ-544 պայմանագիր հավելված 3-ի, ցուցաբերել է 150000 դրամի ֆինանսական օգնություն:

## **2.2 Բնապահպանական պարտավորություններ**

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:
4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:
5. Ապահովել օգտակար հանածոյին արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

## **2.3 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը**

- Ընկերությունը մինչև 2020թ. կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, այնուամենայնիվ, մինչև 2018 թվականը չի վճարել բնապահպանական վճարներ:
- Չնայած նրան, որ Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրի մեջ նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է, նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն, վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, Ընկերությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:
- «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ն իր երկրաբանահետախուզական աշխատանքների հետևանքով բացած հորատանցքները փակել է մասնակիորեն:
- Չի կատարել ԲՓ 53 22.06.2016թ. փորձաքննական եզրակացության պահանջները, չնայած նրան, որ, համաձայն ՇՄԱԳ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի, փորձաքննական եզրակացությունը կորցրել է իր ուժը, քանի որ նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվել փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Ոսկեձորի հանքավայրի վերաշահագործումը նոր իրավիճակում իրատեսական չէ՝ ըստ բնակավայրի վարչական ներկայացուցիչի:

## 2.4 Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

### *Հանքի փակման աշխատանքներ*

Հանքի փակման նախատեսված պարտավորություններ.

1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նախագծով նախատեսված՝ հանքի փակումից հետո աշխատուժի սոցիալական մեղմացման նախատեսվող միջոցառումները՝ վերակորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղեր աշխատանքի տեղավորելու համար և այլն:
2. Փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նախատեսվող միջոցառումներ:
3. Համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն և այլն:
4. Հանքի շահագործման աշխատանքներից 2 տարի առաջ կազմել հանքի փակման վերջնական ծրագիրը և ներկայացնել լիազոր մարմին:
5. Սույն պայմանագրի թիվ 2 հավելվածի առաջին կետով նախատեսված միջոցառումները սահմանված չափով և ժամկետներում չկատարելու դեպքում այն կհամարվի պայմանագրային պարտավորությունների խախտում, և կկիրառվեն օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

### *Միջոցառումներ՝*

1. Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերառեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախս, կատարման ժամկետը՝ 64 օր, ներդրումների չափը՝ 58597,0 հազ. դրամ:
2. Արտադրական հրապարակի ապամոնտաժում, տեղափոխում՝ կատարման ժամկետը՝ 30 օր, ներդրումների չափը՝ 250,0 հազ. դրամ:
3. Բացահանքի տարածքի մոնիթորինգ, կատարման ժամկետը՝ 5 տարի, ներդրումների չափը՝ 2200,0 հազ. դրամ:
4. Նախագգուշացնող՝ կանխարգելող միջոցների տեղադրում, կատարման ժամկետը՝ 10 օր, ներդրումների չափը՝ 430,0 հազ. դրամ:

## 3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալներ<sup>3</sup>

| Տվյալ | 2016 թ. | 2017թ. | 2018թ. |
|-------|---------|--------|--------|
|-------|---------|--------|--------|

<sup>3</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>



| Գունավոր մետաղների հանքաքար | 0                                                                                                                                                                                                                                                                                         | 0                                                                                                                                                                                                                                                                                                  | 0                                                                                                                                                                                                                              |
|-----------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Շահութահարկ, դրամ           | Հաշվարկված՝<br>956417<br>Վճարված՝ 992609<br>Նշում: 2016թ.<br>շահութահարկի<br>հաշվարկում<br>առաջացած<br>հարկային վնաս<br>2012-2016թթ.<br>համար -98970426<br>դրամ: Ոչ<br>ռեզիդենտի<br>շահութահարկ՝<br>հաշվարկված՝<br>956417 դրամ,<br>հաշվետու տարում<br>վճարված՝ 992609<br>դրամ:            | Հաշվարկված՝<br>-130169643<br>Վճարված՝ 0<br>Հաշվանցված՝ 0<br>Նշում: 2017թ.<br>շահութահարկի<br>հաշվարկում<br>առաջացած<br>հարկային վնաս<br>2012-2017թթ.<br>համար -130169643<br>դրամ:                                                                                                                  | Հաշվարկված՝<br>-171290596<br>Վճարված՝ 0<br>Նշում: 2018թ.շահութահա<br>րկի հաշվարկում<br>առաջացած<br>հարկային վնաս<br>2013-2018թթ.<br>համար՝ -171 290<br>596 դրամ:                                                               |
| Եկամտային հարկ, դրամ        | Հաշվարկված՝<br>12481758<br>Վճարված՝ 12664526<br>Հաշվանցված՝<br>674210՝<br>Նշում: Վճարումը<br>կատարվել է 2016թ<br>ընթացքում՝ 2015թ<br>դեկտեմբերից մինչև<br>2016թ. դեկտեմբեր<br>/մասնակի/:<br>Հաշվետու տարում<br>հաշվանցված<br>հաշվանցում՝<br>համաձայն<br>եկամտային հարկի<br>հաշվետվության: | Հաշվարկված՝<br>11507057<br>Ստուգման ակտով<br>(ակտերով) (ուս<br>ումնասիրությա ն<br>արձանագրութ<br>յամբ)<br>հաշվարկված՝<br>129547<br>Վճարված՝ 8940395<br>Հաշվանցված՝<br>663025<br>Նշում: Հաշվետու<br>տարում հաշվա<br>նցվածՀաշվանցում<br>համաձայն<br>եկամտային հարկի<br>հաշվետվության<br>663025 դրամ: | Հաշվարկված<br>15130222<br>Վճարված՝<br>16551973<br>Նշում: Հաշվետու<br>տարում<br>հաշվանցված<br>167465 դրամ:<br>Վճարումը՝ 2017թ<br>դեկտեմբերից<br>մինչև 2018թ<br>նոյեմբեր<br>ամիսների<br>համար, ներառյալ<br>298899 դրամ<br>տույժ: |

|                                              |        |                                                                                                                         |                                                                                                                                                                                                                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                             |
|----------------------------------------------|--------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ավելացված<br>հարկ, դրամ                      | արժեքի | Հաշվարկված՝<br>-2277637<br>Վճարված՝ 0<br>Նշում: Ենթակա է<br>հաշվանցման՝<br>Դեբետ, գերավճար<br>բյուջե՝ -2277637<br>դրամ: | Հարկային<br>հաշվարկով<br>(հայտարարագրով)<br>հաշվարկված՝<br>-27055262<br>Ստուգման ակտով<br>(ակտերով) (ուս<br>ումնասիրության ն<br>արձանագրությ<br>յամբ)<br>հաշվարկված՝<br>79999<br>Վճարված՝ 0<br>Հաշվանցված՝<br>79999<br>Նշում: 26975263<br>դրամ ենթակա է<br>հաշվանցման՝<br>Դեբետ, գերավճար<br>բյուջե | Հաշվարկված՝<br>-1153873<br>Վճարված՝ 0<br>Հաշվետու<br>տարում<br>միասնական<br>հաշվին<br>վերադարձված<br>26670277<br>Նշում:<br>Փոխհատուցման<br>ենթակա ԱԱՀ-ի<br>գումար:<br>Միասնական<br>հաշվին<br>վերադարձված<br>2017թ 3-րդ, 4-րդ<br>եռ. -ներ, 2018թ.<br>հունվար-հունիս<br>ամիսների<br>գումարներ |
| Ակցիզային հարկ, դրամ                         |        | 0                                                                                                                       | 0                                                                                                                                                                                                                                                                                                   | 0                                                                                                                                                                                                                                                                                           |
| Ռոյալթի, դրամ                                |        | 0                                                                                                                       | 0                                                                                                                                                                                                                                                                                                   | 0                                                                                                                                                                                                                                                                                           |
| Բնօգտագործման վճար,<br>դրամ                  |        | 0                                                                                                                       | 0                                                                                                                                                                                                                                                                                                   | 0                                                                                                                                                                                                                                                                                           |
| Բնապահպանական<br>վճարներ, դրամ               |        | 0                                                                                                                       | 0                                                                                                                                                                                                                                                                                                   | 0                                                                                                                                                                                                                                                                                           |
| Բնապահպանական<br>վճարներ (մաքսային),<br>դրամ |        | 0                                                                                                                       | 0                                                                                                                                                                                                                                                                                                   | 0                                                                                                                                                                                                                                                                                           |
| ՇԹ Պետտուրք, դրամ                            |        | Հաշվարկված՝<br>10000000՝<br>Վճարված՝ 10000000                                                                           | Հաշվարկված՝<br>10000000՝<br>Վճարված՝ 10000000                                                                                                                                                                                                                                                       | Հաշվարկված՝<br>10000000՝<br>Վճարված՝<br>10127500՝                                                                                                                                                                                                                                           |
| ՇՄՊ դրամագլուխ, դրամ                         |        | Բազային 0 դրամ<br>Հաշվետու տարվա<br>համար<br>հաշվարկված՝ 0,<br>վճարված 0                                                | Բազային՝ 0<br>Հաշվետու տարվա<br>համար<br>հաշվարկված՝ 0,<br>Վճարված՝ 0                                                                                                                                                                                                                               | Բազային՝<br>12224500<br>Հաշվետու տարվա<br>համար՝ 12224500<br>հաշվարկված,<br>Վճարված՝<br>12224500                                                                                                                                                                                            |
| Մշտադիտարկումների                            |        | Բազային՝ 0                                                                                                              | Բազային 0,                                                                                                                                                                                                                                                                                          | Բազային՝ 0                                                                                                                                                                                                                                                                                  |

|                                        |                                                                                                                                                                                                                      |                                                                                                                                                                                                |                                                                                                                                 |
|----------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| իրականացման վճար,                      | Հաշվարկված՝ 0<br>Վճարված՝ 0                                                                                                                                                                                          | Հաշվարկված՝ 0<br>Վճարված՝ 0                                                                                                                                                                    | 2018թ-ի համար<br>Հաշվարկված՝ 0,<br>Վճարված՝ 0                                                                                   |
| Գույքահարկ<br>(Կապան համայնք),<br>դրամ | Հաշվարկված՝ 44180<br><br>Վճարված՝ 48490<br>Գերավճարի կամ<br>ապառքի մնացորդը<br>հաշվետու տարվա<br>վերջի դրությամբ՝<br>22090<br>Նշում: 01.01.16թ.<br>դրությամբ<br>գույքահարկի գծով<br>պարտքը կազմում<br>էր 26400 դրամ: | Հաշվարկված՝<br>41540<br><br>Վճարված՝<br>66474<br>Գերավճարի կամ<br>ապառքի մնացորդը<br>հաշվետու տարվա<br>վերջի դրությամբ՝<br>19450<br>Նշում: 24734 դրամ<br>նախորդ<br>տարիներից<br>պարտքի մարում: | Հաշվարկված՝<br>33620<br>Վճարված՝<br>36350<br>Գերավճարի կամ<br>ապառքի<br>մնացորդը<br>հաշվետու տարվա<br>վերջի դրությամբ՝<br>16810 |
| Հողի հարկ (Քաջարան<br>համայնք), դրամ   | Հաշվարկված՝ 0<br>299331՝ Գեղի<br>համայնք<br>(խոշորացումից<br>հետո Քաջարան<br>համայնք)<br>335790՝ Նոր<br>Աստղաբերդ<br>համայնք<br>(խոշորացումից<br>հետո Քաջարան<br>համայնք)                                            | 0                                                                                                                                                                                              | 0                                                                                                                               |
| Վարձակալություն<br>(Հողամաս)<br>դրամ   | 0                                                                                                                                                                                                                    | 0                                                                                                                                                                                              |                                                                                                                                 |
| Վարձակալություն<br>(Անշարժ գույք)      | 0                                                                                                                                                                                                                    | 0                                                                                                                                                                                              | 0                                                                                                                               |
| Վարձակալություն<br>(Փոխադրամիջոց)      | 0                                                                                                                                                                                                                    | 0                                                                                                                                                                                              | 0                                                                                                                               |
| Տույժ                                  | Հաշվարկված՝<br>588915<br>Եկամտահարկ<br>Վճարված՝ 588915<br>(ՀՀ ՊԵԿ)<br>Հաշվարկված՝ 7910<br>գույքահարկ                                                                                                                 | Հաշվարկված՝<br>99159<br>Եկամտահարկ,<br>62685<br>Եկամտահարկ,<br>7871 գույքահարկ<br>Վճարված՝                                                                                                     | 0                                                                                                                               |

|                                                   |                                                  |                                                                                                            |                                                                                                                                                                                                |
|---------------------------------------------------|--------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|                                                   | Վճարված՝ 7910<br>(Կապան համայնք)                 | 99159<br>Եկամտահարկ (ՀՀ<br>ՊԵԿ),<br>62685<br>Եկամտահարկ (ՀՀ<br>ՊԵԿ),<br>7871 գույքահարկ<br>(Կապան համայնք) |                                                                                                                                                                                                |
| Տուգանք                                           | 0                                                | Հաշվարկված՝<br>77727<br>Վճարված՝<br>77727                                                                  | 0                                                                                                                                                                                              |
| Սոց.-տնտ.<br>պարտավորություն<br>(Քաջարան համայնք) | 0                                                | 0                                                                                                          | Քաջարան<br>քաղաքի<br>զարգացման<br>սոցիալ-<br>տնտեսական<br>ծրագրի<br>մասնակցությո<br>ւն 300000 դրամ,<br>սոցիալապես<br>անապահով<br>ընտանիքներին<br>նպաստի<br>տրամադրում՝<br>200000 դրամ          |
| Բարեգործական<br>հատկացումներ<br>(Քաջարան համայնք) | 0                                                | 0                                                                                                          | 0                                                                                                                                                                                              |
| Նվիրատվություն                                    | 200000 դրամ<br>Կապանի N 6<br>հիմնական<br>դպրոցին | «Մայր Հայաստան<br>XXI սոցիալ-<br>մշակութային» ՀԿ-<br>ին՝ 600000 դրամ                                       | «Նյարդահոգեբուժ<br>ական մարզ.<br>դիսպ.» ՓԲԸ-ին Է.Լ.<br>գողիչ<br>սարքավորման<br>անհատույց<br>տրամադրում<br>բարեգործական<br>նպատակներով<br>համաձայն<br>16/04/18թ N 361<br>գրության<br>(Արժեքային |

|                      |    |    |                                                                                                                                                             |
|----------------------|----|----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|                      |    |    | գնահատականը՝<br>89250)<br>«Գեղիի<br>միջնակարգ<br>դպրոց» ՊՈԱԿ-ին<br>ֆինանսական<br>օգնություն<br>համաձայն Պ-544<br>պայմանագիր<br>հավելված 3-ի՝<br>150000 դրամ |
| Աշխատատեղեր, մարդ    | 21 | 28 | 24                                                                                                                                                          |
| Անհատույց օտարումներ | 0  | 0  | 0                                                                                                                                                           |

#### 4. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017, 2018թթ. համար

- 2017-2018թթ. Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵ) նախարարության հաշվետվությունների մեջ կան տարբերություններ: Եթե 2017 և 2018թթ. Ընկերության հաշվետվության մեջ նշվում է, որ Կապան համայնքին որպես գույքահարկ վճարել է 66474 և 36350 դրամ, ապա այդ նույն թվերի համար ՏԿԵ հաշվետվություններում վճարի չափերը կազմում են 76781<sup>4</sup> և 16900 դրամ<sup>5</sup>:
- 2016-2018թթ. Ընկերության և Շրջակա միջավայրի (ՇՄ) նախարարության հաշվետվությունների մեջ տարբերությունը հիմնականում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և մշտադիտարկումների համար նախատեսված վճարների բազային չափի և դրա համալրման չափերի մեջ է: Մասնավորապես, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հաշվետվություններում դրամագլխի բազային չափը նշվում է 58597000 դրամ, իսկ Ընկերության հաշվետվություններում այդ թիվը բացակայում է: ՇՄ նախարարության հաշվետվություններում որպես դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծություն հաշվետու տարվա համար նշված է 1717498 դրամ, իսկ Ընկերության 2016, 2017 թվականների հաշվետվություններում այդ թիվը բացակայում է: 2018թ-ի հաշվետվության մեջ որպես դրամագլխին հաշվետու տարվա համար հատկացվելիք գումար նշված է 12224500, որքան և Ընկերությունը վճարել է 2018թ-ին: Մշտադիտարկումների վճարի բազային չափը ՇՄ նախարարության 2018թ-ի հաշվետվությունում նշված է 2200000 դրամ<sup>6</sup>, վճարման ենթակա գումարի մեծությունը հաշվետու տարվա համար՝ 64490 դրամ: Ընկերության հաշվետվությունների մեջ դրանք կազմում են 0 դրամ:

<sup>4</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=2>

<sup>5</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=2>

<sup>6</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=1>

- Ըստ ՊԵԿ-ի հաշվետվության<sup>7</sup>՝ 2016 թվականին Ընկերությունը վճարել է 956417 դրամի շահութահարկ, ըստ Ընկերության հաշվետվության՝ 992609 դրամ: Ըստ ՊԵԿ-ի՝ վճարել է 13333492 դրամ եկամտահարկ, ըստ Ընկերության, 13338736 դրամ եկամտահարկ:
- Ըստ ՊԵԿ-ի 2017 թվականի հաշվետվության<sup>8</sup>՝ Ընկերությունը ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 միլիոն դրամ պետական տուրքը չի վճարել, ըստ Ընկերության, վճարել է: Տարբերություններ կան նաև վճարված եկամտային հարկերի մասով:

## 5. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Գեղի Գոլդ» ՍՊԸ-ի և ՊԵԿ հաշվետվությունների համաձայն՝ Ընկերությունը 2016-2018 թվականներին բնապահպանական վճար/հարկ չի հաշվարկել և չի վճարել պետական բյուջե:

Մինչ 2020 թ-ը «Գեղի Գոլդ» ՍՊԸ-ն ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում, ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Քաջարան համայնքը չի կարողացել օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը<sup>9</sup>, ըստ որի, այնտեղ ընդգրկվեցին բոլոր մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները, այդ թվում նաև «Գեղի Գոլդ» ՍՊԸ-ն:

## 6. Համայնքային զարգացման ծրագրերում «Գեղի Գոլդ» ՍՊԸ-ի ներգրավվածության մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված Գեղի համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրում<sup>10</sup> նշված է, որ ծրագիրը միտված է լուծելու համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի և հանգստի կազմակերպման խնդիրները, ապահովելու համայնքի բնակավայրերի համաչափ զարգացումը, ինչպես նաև նպաստելու գյուղատնտեսության զարգացմանը: Համայնքի հիմնախնդիրներից է խմելու ջրի նոր ներքին ցանցի կառուցումը, ինչը կկանխի կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի մեջ և կկանխի վարակիչ

<sup>7</sup><https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3կ>

<sup>8</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

<sup>9</sup> <https://www.arlis.am/>

<sup>10</sup> [http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/,24673\(1\).zip](http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/,24673(1).zip)Վեղի\Գեղի - ZIP archive, unpacked size 142 684 bytes



հիվանդությունների ռիսկը: Առաջնային են նաև ներհամայնքային ճանապարհների ասֆալտամատման, համայնքի աղբահանության կազմակերպման և իրականացման խնդիրները: Սակայն այդ ծրագրերի ֆինանսավորման համար համայնքային միջոցները շատ սուղ են, իսկ դրանց համաֆինանսավորման համար «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ից օժանդակություն ստանալու ակնկալիքներ ծրագրում նշված չեն:

Նոր Աստղաբերդ համայնքի 2017-2021թթ զարգացման ծրագրում նշվում է, որ համայնքի ձեռնարկություններն են «Լեռ-Էքս-Էներգիա» ՍՊԸ-ն, որը արտադրում է էլեկտրաէներգիա և սպառումը իրականացնում է տեղում, «Լեռ-Էքս» ՍՊԸ-ն, որի աշխատանքներն այս պահի դրությամբ դադարեցված են և, որը արդյունահանում և մշակում էր պղինձ-մոլիբդեն, «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ն, որն ունի ընդերքօգտագործման իրավունք, որի հետ համայնքը պետք է կնքի սերվիտուտի պայմանագրեր<sup>11</sup>: Սակայն համայնքի զարգացման ծրագրում «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ից ստացվող օժանդակության մասին չի նշվում:

Քաջարան քաղաքի զարգացման հնգամյա ծրագրում<sup>12</sup> նշվում է, որ քաղաքի զարգացման միաբևեռ տնտեսական ճյուղը լեռնահանքային արդյունաբերությունն է, և որ տարածաշրջանում առկա հարուստ հանքային ռեսուրսները ոչ միայն Քաջարանի, այլև հարակից տարածքների տնտեսությունները երկար ժամանակաշրջանի համար կկողմնորոշեն դեպի լեռնահանքային արդյունաբերություն՝ սրանից բխող դրական և բացասական հետևանքներով: Տնտեսության մյուս ճյուղերն ուղղակիորեն կամ անուղղակի կապված են և հետագայում էլ կապված կլինեն լեռնահանքային արդյունաբերության հետ: 2016թ. օրինակով շեշտված է, որ քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտների մոտ 20%-ը ապահովվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (ԶՊՄԿ) կողմից պայմանագրային հիմունքներով տրամադրվող նպատակային հատկացումներով: Միաժամանակ նշվում է, որ համայնքի սեփական եկամուտների մեծ մասը ձևավորվում է համայնքի հողի նկատմամբ կառուցապատման իրավունքի համար ԶՊՄԿ ՓԲԸ-ի և այլ իրավաբանական անձանց կողմից կատարվող վարձավճարներից: Որպես սպառնալիք է նշվում ԶՊՄԿ գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Քաղաքի զարգացման ծրագրում մեծ տեղ է հատկացված շրջակա միջավայրի պահպանությանը, մասնավորապես, շրջակա միջավայրի դեգրադացիայի կանխարգելմանը, էկոլոգիական անվտանգության ապահովմանը և էկոկրթական միջավայրի բարելավմանն ուղղված գործողություններին: «Գեղի Գօլդ» ՍՊԸ մասին, որպես Քաջարանում ծրագրերի աջակցության կազմակերպություն, չի նշվում:

---

<sup>11</sup> [http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/,24646\(2\).zip](http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/,24646(2).zip) - ZIP archive, unpacked size 145 013 bytes


<sup>12</sup> <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/,24592.zip> \Քաջարան\Քաջարան - ZIP archive, unpacked size 1 111 070 bytes

Անգամ COVID-19 համավարակի և պատերազմական իրավիճակի հետևանքով տուժած ընտանիքներին, ըստ ազդակիր բնակավայրերի ներկայացուցիչների, «Գեղի Գօլդ» ՄՊԸ-ն չի ցուցաբերել որևէ օժանդակություն:

## 7. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

Ծրագրի շրջանակներում Ոսկեծորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման ազդակիր համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացվել են հարցումներ: Հարցման նպատակն էր պարզել ԱՃԹՆ-ի ոլորտում բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

Հարցմանը մասնակցել են 11 անձ՝ 7 կին և 4 տղամարդ, այդ թվում նաև Քաջարան համայնքի և Նոր Աստղաբերդ և Գեղի բնակավայրերի վարչական շրջանների ղեկավարը:



Նկարներ 4., 5., 6., Հարցազրույցներ ազդակիր բնակավայրերի ՏԻՄ ներկայացուցիչների հետ

Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված է սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- Ըստ Նոր Աստղաբերդի նախկին համայնքապետ Սուրիկ Թևանյանի՝ «Գեղի Գուլ» ՍՊԸ-ի գործունեությանը դեմ բողոքել են Կապանի բնակիչները, քանի որ Կապանը խմելու ջուր է վերցնում Գեղի գետից, որը հանքարդյունաբերական գործունեության արդյունքում կաղտոտվեր:

- Որպես բնակավայրերի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ՝ հարցման մասնակից գյուղական բնակավայրերի բնակիչները նշել են աշխատատեղերի բացակայությունը, նախկին կոլեկտիվ տնտեսությունների կազմալուծման արդյունքում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելու անհնարինությունը, գյուղատնտեսական հողերի ոռոգման համար պահանջվող ջրի պակասը, միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:

- Հարցվածների գերակշիռ մասը կողմ է հանքավայրի շահագործմանը և ոսկու կորզման ֆաբրիկայի բացմանը, քանի որ աղքատությանից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա, սակայն կարծում են, որ հանքավայրը շահագործող «Գեղի Գուլ» ՍՊԸ-ն պարտադիր պետք է ապահովի սահմանված էկոլոգիական նորմերի և պահանջների կատարումը, ինչպես նաև պարտադիր կատարի ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի նկատմամբ ստանձնած սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու պարտավորությունները:

- Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցության կապը չեն կարողանում միանշանակ գնահատել հարցվածների հիմնական մասը: Բոլոր դեպքերում հարցվածներին անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը:

- Բնակավայրերի վարչական ղեկավարն իրազեկված չէ Ընկերության կողմից հողի և այլ անշարժ գույքի դիմաց վճարումների գործընթացից: Նա պնդում են, որ «Գեղի Գուլ» ՍՊԸ-ն բարեխիղճ ձևով վճարում էր հողի և այլ անշարժ գույքի դիմաց սահմանված վճարները, իսկ հանքավայրի տարածքում օգտագործված շարժական գույքի համար վճարումներ չի կատարել այն դեպքում, երբ Ընկերությունն իր ԱՃԹՆ շրջանակներում ներկայացրած հաշվետվություններում նշում է, որ այդ վճարումները վերջին անգամ կատարել է 2016թ: Նույնն են հաստատում նաև ՏԿԵ նախարարության հաշվետվությունները:

- Ըստ հարցման մասնակիցների ներկա փուլում շրջակա միջավայրի աղտոտում տեղի չի ունենում, քանի որ հանքավայրը չի շահագործվում և երբևէ չի շահագործվել, իրականացվել են միայն հորատման աշխատանքներ:

- Առողջական խնդիրներ ունենալու դեպքում բնակիչներն օգտվում են տեղի բուժկետից, որի սպասարկման ծառայությունից գոհ է հարցվածների զգալի մասը: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններից:

- Բնակավայրերի վարչական ղեկավարն ըստ էության չէր տիրապետում Ընկերության կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակության պարտավորությունների, այդ մասով կատարած մասնահանումների, կատարված սոցիալական օժանդակության, տեղական հարկերի և տուրքերի վերաբերյալ տեղեկատվությանը:

- ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ Քաջարանի համայնքապետարանի Բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի պետը նշեց, որ հայ-ադրբեջանական պատերազմի զինադադարի պայմաններում հանրապետությունում առաջացած նոր՝ բանակի վերականգնման, երկրի կայունացման մարտահրավերներին զուգահեռ, համայնքում նույնպես առաջացել են հրատապ լուծման ենթակա նոր՝ քաղաքացիական պաշտպանության թաքստոցների և ապաստարանների կառուցման, միջպետական ավտոճանապարհների որակի և անվտանգության ապահովման, Արցախից տեղահանվածների, զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներ: Հետագա վտանգների կանխարգելման նպատակով հրատապ է նաև Արծվանիկի պոչամբարի անվտանգության գնահատումը, անհրաժեշտության դեպքում նաև ամրացումը:

- Համայնքի ղեկավարը նշեց, որ, ընդերքօգտագործման պայմանագիրը կնքելիս, համայնքը ներգրավված չի եղել դրա շուրջ ընթացող քննարկումներին և չի արտահայտել իր դիրքորոշումը:

### **Հանքավայրի ազդակիր բնակավայրերի բնակիչների առաջարկները**

Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման համար բնակիչներն առաջարկում են՝

1. Բնակավայրերն ապահովել խմելու մաքուր ջրով:
2. Հիմնել օրինական աղբավայրեր, բնակավայրերում տեղադրել աղբամաններ, կազմակերպել պարբերական աղբահանություն:
3. Անցկացնել հողերի, ջրերի մոնիտորինգ աղտոտվածության մակարդակը ճշտելու համար:
4. Կատարել Արծվանիկի պոչամբարի անվտանգության գնահատում, անհրաժեշտության դեպքում իրականացնել տեխնիկական անվտանգության բարձրացման միջոցառումներ:
5. Բնակչության շրջանում կազմակերպել էկոլոթական դասընթացներ, մշակել և ներդնել էկոմշակույթի բարձրացման մեխանիզմներ:
6. Ուժեղացնել ազդակիր բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող հանքարդյունահանող ընկերությունների իրատեսական հաշվետվողականության մեխանիզմները, ստեղծել արդյունահանող-համայնք համատեղ կառույց/մարնին, և նրան վերապահել աշխատանքների համակարգման և գնահատման լիազորություններ:

**Բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի համար բնակիչներն առաջարկում են՝**

1. Կատարել ճանապարհների վերանորոգում:

2. Ապահովել բավարար միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցություն:
3. Բնակավայրերում հիմնել տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասեր և աշխատատեղեր:
4. Պետական աջակցությամբ անապահով ընտանիքներին տրամադրել ընտանի անասուններ:
5. Բնակավայրերում սկսել քաղաքացիական պաշտպանության կառույցների՝ թաքստոցների, ապաստարանների, նկուղների կառուցման/վերակառուցման աշխատանքներ, վարչական շենքերը, դպրոցները համալրել նոր և պիտանի անհատական պաշտպանիչ պարագաներով, ապահովել միջպետական ավտոճանապարհների որակն ու անվտանգությունը, զոհվածների ընտանիքներին ցուցաբերել սոցիալական աջակցություն:
6. Հանքարդյունաբերությանը զուգահեռ ստեղծել նախադրյալներ փոքր գյուղատնտեսության և էկոտուրիզմի զարգացման համար:

## 8. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել /չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մաս/:
2. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
3. Ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունները կատարել է մասնակիորեն:
4. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով հանքարդյունաբերական ընկերությունների ստանձնած պարտավորությունների մասին:
5. «Գեղի Գօլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, տարիներ շարունակ կատարվող լեռնակապիտալ աշխատանքներում օգտագործվող փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը չի վճարել: Ընկերությունը խախտել է «Գույքահարկի մասին» ՀՀ Օրենք, հոդված 13-ի պահանջները: Չնայած օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 2) կետը սահմանում է, որ հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարող կազմակերպությունն այս հարկատեսակը պետք է վճարի իր հաշվառման վայրի համայնքի բյուջե, այնուամենայնիվ, «Գեղի Գօլդ» ՍՊԸ-ն, գրանցված լինելով ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում (Ստեփանյան փողոց, թիվ 6), համայնքային բյուջե է վճարել միայն շենք-շինությունների համար սահմանված գույքահարկը՝ չվճարելով փոխադրամիջոցների համար սահմանվող գույքահարկը: Այստեղ առկա է օրենսդրական բաց, որը պետք է լրացնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեռնակապիտալ աշխատանքներում ներգրավված

փոխադրամիջոցների գործունեության արդյունքում դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում է ազդակիր բնակավայրերը/համայնքի բնակչությունը:

6. Ընկերությունը մինչև 2020թ. կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, այնուամենայնիվ, մինչև 2018 թվականը չի վճարել բնապահպանական վճարներ:
7. Չնայած նրան, որ Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրի մեջ նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, Ընկերությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:
8. 2017թ. Քաջարան խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
9. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:

*Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*